ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ № 5 ԴԵԿՏԵՄԲԵՐ, 1894.

ՀԱՄԱՅՆՔ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԱՄԱՅՆԱԿԱՆ ՀԱԿՈՒՄՆԵՐԸ(*)

«Մարդիկ էնդուր են այնչափ մանրա-
ցել»
«Եւ մէջքներից թէքուել, կուացել»
«Որ հարկ են տալիս գզրին ու քոխվին...»

«Մենք չ'ունենք գզիր, քեօխվա, քեթ-
խուդա»
«Էնդուր ենք մնացել այսպէս ածդահաւ»
Ղ. Աղայեանց. „Տօրք-Անգեղ".

Մինչեւ հիմայ մեր լոյս ընծայած հրատարակութիւններով աշխատեցանք ցոյց տալ՝ որ անիշխանական ազատ եւ ինքնավար համայնքի կազմակերպութիւնը — հիմնուած համայնքը կազմող իւրաքանչիւր անհատի բացարձակ ազատութեան վրայ — միակ եւ ճշմարիտ միջոցն է փրկելու թշուառ մարդկութիւնը իւր այժմեան անտանելի դրութիւնից եւ որ միակ նպատակը պէտք է լինի ամէն ճշմարիտ եւ առողջ միտք ունեցող յեղափոխականների։

Երբ մենք ուզում ենք հարուածել այժմեան

(*) *Այս համարից սկսած մենք կը զետեղենք «Համայնքում» մի շարք քաղուածներ մեր մի ընկերոջ նոյն վերնագիրը կրող աշխատութիւնից, որ յետոյ ամբողջովին եւ աւելի մշակուած լոյս կը տեսնի առանձին գրքոյկով։*

Մեր նպատակն է փաստերով ցոյց տալ, որ համայնական անիշխանական գաղափարները բոլորովին օտարամուտ չեն հայերիս համար, — որ նրանք կամաւորապէս փոխ առնուած չեն Եւրոպայից, այլ ունեն էական հիմք նոյն իսկ հայկական կեանքի մէջ։ Բաւական չէ միայն ցանել գաղափարական սերմեր՝ ինչքան էլ այդ սերմերը լաւ լինեն. աճելու եւ պտղաբերելու համար պէտք է որ նրանք նպաստաւոր հող գտնեն։ Այդ հողը հայ անիշխանականի համար «Հայ ժողովրդի համայնական հակումներն» են։

Անշուշտ մենք ամենեւին չենք մոռանում, որ այդ հակումները մեծ մասամբ մի այլ պատմական շրջանի մնացորդներ են. բայց ի՞նչ ծագում էլ որ ունենան, դրանք մի կենսական երեւոյթ եւ այժ են ներկայումս. իսկ որովհետեւ յեղափոխականը պիտի խորհէ եւ գործէ ներկայիս համար, ժողովրդի ներկայ ցաւերի մասին եւ ո՛չ թէ շատ հեռաւոր, միայն երազելի ապագայի համար, մենք չը պէտք է անուշադիր անցնենք այդ հակումների մօտով, որոնք գուցէ պարունակում են իրենց մէջ հայ ժողովրդի մօտաւոր բարօրութեան ու ազատութեան սկզբունակէտն եւ գրաւականը։

Մենք արդէն լսում ենք այն նկատողութիւնը, որ մեզ կանեն, այն է՝ որ նոյն հակումները գոյութիւն են ունեցել եւ դեռ եւս ունեն ուրիշ ազգութիւնների մէջ, ինչպէս Ռուսաստանում, բայց չեն դիմանում կապիտալիստական արդիւնաբերութեան քայքայիչ ազդեցութեան առջեւ։ Հարցը եւ վէճը նոր չեն։ Ռուս յեղափոխական գրականութիւնը շատ է զբաղուել դրանով եւ մենք դիտաւորութիւն չունենք նորոգել այդ վէճը հայկական հողի վրայ. բաւականանանք առաջ բերելով „նարոդնիչէստուօ" կոչուած հոսանքի վերջին խօսքը, որ ամբողջապէս վերաբերում է հայկական կեանքին եւ Հայկական խնդրին։ Չը նայած որ մենք դէմ ենք —, կամ աւելի ճիշտն ասած, այն պատճառով, որ մենք դէմ ենք ազգայնութեան, «Հայկական խնդրի» տակ մենք հասկանում ենք նաեւ ռուսահայկական խնդիրը. հետեւապէս „նարոդնիկների" հետ մենք կասենք. —

„Եթէ սոցիալական յեղափոխութեան փոթորիկը տեղի ունենայ նախ քան նշանաւոր փոփոխութիւններ առաջանալը Հասարակական դրութեան մէջ, այդ յեղաշրջման գլխաւոր առարկան պիտի լինի Հողային խնդիրը։ Բայց քանի մենք անում ենք մեր գործը, խոշոր արդիւնաբերութիւնն անշարժ չի մնում (Անդրկովկասում)....

Չը պէտք է անուշադիր թողնել այդ երեւոյթը։ Հաստատուելով գործարաններում և

կապիտալիստական հարստահարիչ կազմակերպութիւնը, մենք դրանով ուղղակի հարուածում ենք անհատական սեփականութեան բռնապետական սկզբունքը(*). դպչելով անհատական սեփականութեան սկզբունքին, մենք դպչում ենք կառավարչական կազմակերպութեան՝ քանդելով այդ դժոխային մեքենայի մարդակեր անիւները։

Ընկերաբանական գիտութիւնը հաստատ փաստերի վերայ յենուելով՝ պարզ ցոյց է տալիս, որ իշխանութիւնը ծնուել է անհատական սեփականութեան սկզբունքի հետ։ Լինելով երկօրեակներ՝ իշխանութիւնը անհատական սեփականութեան կրտսեր եղբայրն է եւ որի գոյութեան միակ նպատակը իւր անդրանիկ եղբօրը պաշտպանելն է։

Իշխանութեան եւ անհատական սեփականութեան սկզբունքներն այնչափ սերտ կերպով իրար միացած են, որ մինը իւր ձեւը փոխածին պէս, միւսն էլ անմիջապէս փոխւում է։ Երբ ընկերական կազմակերպութեան հիմքը գերութիւնն էր, իշխանութիւնը միապետական կառավարութեան ձեւն էր ընդունել. իսկ այժմ առ երեւոյթս մարդկային անհատի անձն ազատ լինելով, երբ միայն նորա աշխատանքն են շահագործում եւ բռնաբարում, իշխանութիւնը երեսփոխանական կառավարութեան ձեւն է ընդունել։ Իշխանութիւնն ընդունում է կառավարչական զանազան ձեւակերպութիւններ միայն եւ եթէ պաշտպանելու համար մի խումբ առանձնաշնորհեալ ծոյլերի՝ շահերն ընդդէմ աշխատող եւ արդիւնաբերող ահագին մեծամասնութեան։ Այդ առանձնաշնորհեալ ծոյլերն էին առաջ միայն թագաւորները, իշխանները, ազնուականները, կղերականները, կառավարչական բոլոր պաշտօնեաները մեծից մինչեւ փոքրը, իսկ հիմայ նրանց վրայ աւելացած է հարուստների, դրամատէրների եւ կալուածատէրների դասակարգը, որ երբեմն նոցա տեղը իսկ գրաւում է ինքը միայն։ Կառավարչական մեքենան այն հարստահարիչների, այդ ընկերական հարստութիւնը յափշտակողների ձեռքում մի զէնք է, ինքիրանց պաշտպանելու, իրանց անհատական սեփականութիւնն ապահովելու, եւ իրանց ապադայ շահագործութիւնները դիւրացնելու համար։ Երբ այլեւս առանձնաշնորհեալ դասակարգեր չլինեն, երբ ընկերային հարստութիւնը անհատական ճանկերից ազատուելով համայնքի սեփականութիւն դառնայ, երբ այլեւս հարստահարիչների եւ հարստահարեալների իրար հակառակ եւ թշնամի շահեր չլինեն, այն ժամանակ իշխանութիւնն էլ իւր գոյութեան նպատակը կը կորցնի։ Իշխանութիւնը, որ իւր ձեւը անընդհատ փոխում էր անհատական սեփականութիւնը պաշտպանելու եւ հարստահարեալ դասակարգի շահագործումն ապահովացնելու համար, բոլորովին պիտի բնաջնջուի, երբ անհատական սեփականութիւնը ջնջուի եւ այլեւս իրար շահագործելու եւ զրկելու տեղիք չմնայ։ Երբ ամեն մարդ աշխատող լինի, երբ ամեն մարդ իւր աշխատութեան արդիւնքն ազատութեամբ վայելէ, իշխանութիւնն ո՞ւմ շահը եւ ո՞րի դէմ պիտի պաշտպանէ։ Շատ բնական է, որ մի բանի պատճառն երբ ջնջուի, արդիւնքն ինքնին կանհետանայ։ Այո՛, իշխանութիւնը պիտի ջնջուի մի օր, նա ոչ մի օգտակար կոչում չունի մարդկութեան կեանքում, նա օտարամուտ է մարդկային ընկերութեան մէջ եւ նրա բարօրութեան ոխերիմ թշնամին է։ Ընկերաբանական հետազօտութիւնները ցոյց են տալիս, որ մարդկութիւնը երկար դարեր ապրած է համայնական դրութեամբ առանց մի որեւիցէ իշխանութեան, երբ անհատական սեփականութիւն չկար, երբ ամեն բան համայնքին էր պատկանում։ Համայնքի իւրաքանչիւր անդամը բացարձակ ազատ լինելով, աշխատում էր համայնքում եւ նրանում գտնում իւր բոլոր պիտոյքներին բաւականութիւն տալու միջոցները։ Մարդկային էակները իրենց բազմազան պէտքերին բաւականութիւն տալու համար համախմբւում են եւ համայնքում ապրում։ Այո՛, մարդն ընկերական կենդանի է, բայց ոչ երբէք ուրիշին գերի դառնալու դատապարտուած։ Բացարձակապէս ազատ լինելու ձգտումը մարդկային էակի ամե-

---

գիւղում, մենք մի դիրք կը բռնենք, որ համապատասխան կը լինի ոչ միայն այսօրուայ դրութեանը, այլ տնտեսական զարգացման ամբողջ ընթացքին։ Արձանագրելով մեր դրօշակի վրայ իբրև նշանաբան՝ „բանո՛ր, վերցո՛ւր գործարանը. գիւղացի՛, տիրի՛ր հողին“. միացնելով բանոր և հողագործ աշխատաւորների յեղափոխական ձգտումները, մենք կարող ենք թողնել տնտեսական փոփոխութիւնների ընթացքն իրենց բնական հոսանքին, և չը վախենալ նրանց այս կամ այն կողմը տատանուելուց։“ (Տես „Զօրնի Պէրէդէլ“, սեպ. 1880)։

(*) Անհատական սեփականութիւն ասելով, պէտք է հասկանալ արդիւնագործութեան միջոցների (հողի, գործարանների, մեքենաների եւ այլն) մասնաւոր սեփականացումն այնպիսի մարդկանց ձեռքում, որոնք անձամբ չեն աշխատում, այլ աշխատեցնում են ուրիշներին, միջոցներից զուրկ անհատներին եւ նրանց աշխատանքը իւրացնում։

նպատակը եւ ամենաառաջին իդէալն է։ Մարդս օրորոցից մինչեւ գերեզման ուրիշ փափագ չունի եթէ ոչ բացարձակապէս ազատ լինել։ Այո՛, բացարձակ ազատութիւնն ուրիշ կազմակերպութեան մէջ չի կարելի գտնել, եթէ ոչ անիշխանական ազատ եւ ինքնուրոյն համայնքում։ Անհատական սեփականութիւնն իւր կառավարական դժոխային մեքենայով կիսավայրենի համայնքի աւերակների վրայ հաստատեց իւր իշխանութիւնը. այժմ անիշխանական ինքնավար եւ ազատ համայնքը՝ քաղաքակրթութեան տուած միջոցներով ճոխացած՝ պիտի դայ վերահաստատուելու նրա աւերակների վրայ, աւետելով երկար դարերից ի վեր չարաչար խաբուած եւ թշուառացած մարդկութեան՝ կատարեալ ազատութիւն, ճշմարիտ եղբայրութիւն եւ իրական հաւասարութիւն։

Մենք կարծում ենք, որ նախապաշարումներից ազատ, չարչարուած մարդկութեան իւրաքանչիւր էակը՝ որը հետաքրքրվում է իւր թշուառ դրութեամբ, եւ որը դեղ ու դարման է փնտռում իւր վշտերին, մի բնական հակում, մի ներքին խուլ ձգտում պիտի ունենայ դէպի այն համայնական կազմակերպութիւնը, ուր բոլորը ազատ, հաւասար եւ եղբայր պիտի լինեն։ Երկար դարեր բռնապետական լծի տակ ստրկացած եւ կրօնի խաբարային շղթաներով կաշկանդուած ժողովուրդը կարծես թէ երբեմն մոռացած էր իւր մարդկային կոչումը եւ իւր ազատ լինելու ձգտումները. մարդկութիւնը կէս մեռած, կէս թմրած դրութեան մէջ էր երկար ժամանակ. թէպէտ եւ երբեմնակի ապատամբութիւններով եւ յեղափոխութիւններով իւր գանգատը, իւր բողոքը յայտնում էր, բայց շատ խուլ եւ անորոշ կերպով։ Վերջին ժամանակներումս ընկերաբանական գիտութեան զարգացումը եւ նրա սկզբունքների տարածումը արծարծեց այդ մոխրի տակ պահուած կրակը, եւ զարգացրեց մարդու մէջ ազատ ու անկախ լինելու ձգտումը եւ հակումը, որ բնական էին նորա կազմակերպութեանը։ Այո՛, մենք կարծում ենք որ այդ հակումը դէպի ազատութիւնը զսպված էր զանազան նախապաշարմունքների կոյտի տակ, եւ որ գլխաւորն է, գաղափարի ոյժը պակսում էր նրան։ Մենք այդ բնական հակումով, այդ գաղափարի ոյժով ենք բացատրում ընկերավարական գաղափարների վերջին ժամանակներումս արած հսկայական յառաջադիմութիւնը եւ մեր ընկերակիցների այդ գաղափարների իրականացման համար ցոյց տուած հերոսական քաջութիւններն եւ զոհաբերութիւնները։

—

Ընդունելով ամբողջ մարդկութեան համար դէպի ազատ եւ ինքնավար համայնքն ունեցած հակումը բնական, մենք դրանով ընդունում ենք միեւնոյն հակումի գոյութիւնը եւ հայերիս մէջ։ Հայերը եւս կազմելով մարդկային ազգի մի ընտանիքը, ենթարկուելով քաղաքակրթական միեւնոյն շրջաններին եւ կրելով հարստահարիչ նոյնանման ճնշումներ պիտի ունենային միեւնոյն հակումները. այս մի պարզ, բացորոշ ճշմարտութիւն է։ Ներկայ փոքրիկ աշխատութեամբ մենք պիտի ջանանք հայերի կեանքից մի քանի փաստեր ցոյց տալ այս մասին։

Հայ ազգի պատմութիւնը՝ իւր կցկտուր տեղեկութիւններով, որոնք բացառապէս վերաբերում են մեր ազգի արդէն քաղաքակրթական շրջանը ոտք կոխելուց յետոյ արած ներքին եւ արտաքին պատերազմներին, գրեթէ ոչինչ ծանօթութիւն չտալիս հայերի նախկին անիշխանական համայնքի մասին։ Ընկերաբանական գիտութիւնը ցոյց է տալիս, որ բոլոր ազգերը, որով եւ մեր ազգը, երկար դարեր ապրած պիտի լինին համայնական կազմակերպութեամբ։ Քանի որ պատմութիւնը լռում է այս մասին, մենք պարտաւորուած ենք դիմել մեր ազգագրական նոր ծածիլ գրականութեան եւ փնտռել փաստեր նրանում...

Մեր տարրական գրականութիւնը, մեր պատմութիւնը թէպէտ եւ գրեթէ բոլորովին համր են այս մասին, բայց եւ այնպէս մենք կարող ենք մի քանի նկատողութիւններ անել։

Մեր պատմութեան ամբողջ նահապետական կամ տանուտէրական շրջանը մենք ընդունում ենք որպէս չարունակութիւն նախապատմական համայնական դրութեան։ Մենք կարծում ենք գտնել նահապետ անուան տակ Ամերիկական մի «Սաշմէն»-ի կատարեալ տիպը։ Նահապետ բառը համարիւն համայնքի գլխաւորի ամենայարմար մի անուն է։ Հայերի համայնքները եւս, ինչպէս յոյների եւ հռովմայեցիներինը համարիւնութեան վրայ հաստատուած են երեւում. Կազմուոը իւր որդիներով եւ ներնդով մի համայնք « Gens » է կազմում. Խուռը, Մանաւազը, Շարան նոյնպէս մի մի համայնք են կազմում։ Ահա՛ այդ համայնքներից կազմվում էր հայկական ցեղը, « Tribut », որի նահապետը, «սաշմէն»-ը կամ «բազիլէոս»-ը Հայկն էր։ Այդ համայնքները բազմացան նոր նոր համայնքներ կազմելով, եւ նոր նոր ցեղեր առաջ բերելով։ Ահա այդ ցեղերի դաշնակցութեամբ, որոնք վերջերը կոչուեցան նախարարութիւններ (ինչպէս Մամիկոնեան, Արծրունեան նախարարութիւններ), կազմում էր ընդհանուր հայութիւնը..

Հետեւելով հայկական պատմական համայնքը իւր ամենաողորմելի աղբիւրներով եւ համե-

մատելով իւր այժմեան մնացորդների հետ, մենք գտնում ենք. —

1. Վարելու հողի եւ արօտատեղերի համայնքի սեփականութիւն լինելը։ Մինչեւ այսօր Հայաստանում կան շատ տեղեր, ուր հողը համայնքին է պատկանում, իսկ արօտատեղերը գրեթէ առանց բացառութեան համայնական են։ Ոչ միայն հողը, այլ այդ հողի հետ սերտ կապակցութիւն ունեցող ուրիշ հիմնարկութիւններ եւս էին համայնական. օրինակ, ջրաղացները եւ ջրանցքները։ Մինչեւ այսօր իսկ պատահում են համայնական ջրաղացներ. կան գիւղեր, ուր միայն մի տնում գտնվում է թօնիր եւ բոլոր գիւղացիք թխում են իրենց հացը նոյն համայնական թօնիրում...

2. Համայնքի անդամների փոխադարձ օգնութեան հասնիլը։ Այսօր իսկ համայնքի համերաշխութիւնն այն աստիճան սերտ եւ մտերիմ է, որ նախկին համայնքի համերաշխութեան վերայ չի կարելի կասկածել... Համայնքի մի անդամը բազմանալով, երբ մի նոր տան, ախոռի եւ այլնի պէտք ունի, ամբողջ համայնքը թէ շինելու ատաղձը մատակարարում է մասամբ եւ թէ անձամբ գալիս աշխատում է։ Երբ մէկի հունձքը մի քիչ ուշացել է, ամբողջ գիւղական համայնքը հաւաքվում է «միջի» անում, մի օրում նրա արտերը հնձում եւ վերցնում է. «Միջի»-ն շատ ընդհանուր է հայոց կեանքում։ գրեթէ ամեն քիչ թէ շատ դժուարութիւն ունեցող գործ «միջի»-ով են կատարում.... Անչափահաս որբերի հողերը մշակելն առանց մի որեւիցէ փոխարինութեան հայ գիւղացու համար մի նուիրական եւ անխուսափելի պարտականութիւն է։ Մենք համերաշխութեան եւ համայնական օգնութեան հետքերն ենք նկատում ամուսնական հանդէսների առթիւ արուած նուիրատուութիւնները, որ ժողովրդական լեզուով կոչվում է «կանչ»։ «Կանչ»-ը մի համայնական պարտաւորութիւն է, որ գիւղական համայնքի իւրաքանչիւր անդամն իւր կարողութեան համեմատ պիտի կատարի։ Երբ մի գիւղում հարսանիք կայ, ամբողջ համայնքը հարսնատուն է դառնում։

(Շարունակ. յաջորդ համարում.)

ՍԱՍՆՈՅ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԵԱՆ
ՄԱՍԻՆ

Սա մի մասնաւոր ընդհարում չէր քայքայուղ պետութիւնների կործանման ժամանակ խիստ սովորական. սա մի հասարակ խլրտում, հասարակ շարժում չէր, որ այնքան սովորական են սուլթանների պետութեան մէջ, — այլ մի կանոնաւոր կռիւ, կռիւ ամբողջ բանակներով, 150 թնդանօթներով և ահագին պաշարով, մի պատերազմ՝ իր բոլոր զարհուրանքներով, որ տեղի ունեցաւ Սասունում։ Հասած դաշտերը ոտնատակ են տուել, ամբողջ գիւղեր հրդեհի կերակուր դարձրել և հողի հետ հաւասարեցրել, հարիւրաւոր և նոյն իսկ հազարաւոր մարդիկ են կոտորուել, կանայք ու երեխաներ խողխողուել ամենավերջին գազանութեամբ։ Մի ամբողջ երկիր, իր բոլոր ազգաբնակութիւնով սովի ու ցրտի ճանկերն է մատնուած, աւերակ, մոխիր է դարձուած.... և սա պատահական մի բան չէ, այլ արդիւնք մի մտածուած տակտիքայի, որ գործ է դրուում սուլթանի կառավարութեան կողմից ահա մօտ 16-17 տարի շարունակ։ Սա բոլոր քայքայուղ, թոյլ պետութիւնների տակտիքան է, որ աշխատում են քէն ու ատելութիւն սերմանել իրենց հպատակ բոլոր ցեղերի մէջ, հեշտութեամբ տիրելու համար։

Այսպէս ռուս-տաճկական վերջին կռուից յետոյ, երբ տաճկահպատակ ժողովրդների տնտեսական և էտնօգրաֆիական պայմաններն ենթարկուեցին մեծ փոփոխութիւնների, որոնք նպաստաւոր էին տաճիկ պետութեան ցանկալի տակտիքային, նա դիմում է Սասնոյ հարեւան քրդերին և նրանց շէյխերի միջոցով ուղարկում է Սասնոյ բնիկ հայախօս քրդերի մէջ իր մոլեռանդ կրօնաւորներին, որոնք ընծաներով, համոզելով և նոյն իսկ բռնութիւններով գրգռում, թշնամացնում են դարերից ի վեր իրար հետ անբաժան բարեկամութեամբ միացած հայ և քիւրդ հարեւաններին։

Դժբախտաբար Բ. Դուռը մեծ յաջողութեամբ հասաւ իր ցանկալի նպատակին. ապացոյց մինչև օրս աւելի և աւելի աճող թալաններն, սպանութիւններն ու կռիւները, որոնք հասցրին Սասունի վերջին կոտորածներին։ Իսկ այդ ամբողջ ժամանակում հայերը չ'հասկացան տաճկական այդ տակտիքան և միջոցներ չձեռնարկեցին նրան խանգարելու։ Այժմ հարցն անհամեմատ աւելի ծանրացել է. քուրդ նոր սերունդը, որ մեծացել կրթ-

ուել է այդ ազդեցութիւնների տակ, բորբոքեցնում է ցեղական կռիւը, բոլոր կռիւներից այդ ամենախիստը, պետութեան բարեհաճ հովանաւորութեան տակ, որպէսզի Սուլթանը հանգիստ կարողանայ իշխել աւերակ երկրի վրայ։

Քանի որ տաճիկ պետութեանը դաշնակից կը լինեն քրդերը, երբէք դժբախտութիւնները չեն դադարիլ, այլ աւելի և աւելի կը խստանան։ Բայց այդ երկսին բաժանելու համար հարկաւոր է, որ քրդերն այլևս օգուտ չունենան այդ միութիւնից։ Ահա հէնց այդ բանը քրդերին յանձն առան հասկացնել Սասունի քաջ լեռնցիները, մանաւանդ Գէլիի և Անտոքի մօտ տեղի ունեցած ճակատամարտներով, ուր քրդերն այնքան կոտորածներ ունեցան, որ բացարձակ կերպով հրաժարուեցին շարունակել կռիւը և մինչև իսկ սպառնացին տաճիկ գնդերին։

Միւս կողմից, Տաճիկ պետութիւնը քայքայելով հայերի նիւթական դրութիւնը, հոր է փորում իր սեփական ոտերի տակ.... Հեռու չէ այն ժամանակը, երբ իր ուժասպառ պետութեան պարտքերի ու ծախսերի ծանրութիւնը ստիպելու է Սուլթանին հարկերի ենթարկել մինչև այժմ ազատ մնացած քիւրդ ցեղերին։ Իրերի բնական զարգացումը մեզ տանում է դէպի այդ կողմը։ Եւ ահա այդ ժամանակ կը կտրուի այդ երկու վայրենի տարրերին միացնող կապը...

Ուրեմն մի կողմից հայերի յեղափոխական դիմադրութիւնը, միւս կողմից իրերի բնական ընթացքը քշում են ճակատագրաբար տաճիկ ողբալի բռնակալութիւնը դէպի կործանում։

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՑԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ

ԹՈՒՐՔԻԱ

Արաբների ապստամբութիւնը Եմէնում արագ կերպով տարածվում է և խիստ անհանգստութիւն է պատճառում սուլթանի կառավարութեան։ Ապստամբութիւնը կարող է բռնել ամբողջ Արաբիան, ուր դժգոհութիւնը դէպի կառավարութեան պաշտոնեաներն ընդհանուր է։ Ժողովուրդն այժմեանից ուրախ է, որովհետև զգում է թէ մօտ է տաճկական լծից ազատուելու օրը։

Սամսոն, 14 հոկտեմբերի 1894.

Կը մտածեմ, թէ որ կողմէն պատմեմ տեսածներս, իմացածներս։ Քաղաքական մէկ որոշ դարձուածքի շնորհիւ կերևայ ինձ հայ բանտարկեալներու արձակումը. ինչու որ Տաճիկ իշխողութիւնը կը պատրաստուէր Ամասիոյ և ուրիշ տեղեր գտնուող հայ շղթայակապներն Էնկիւրիի ճամբով Աքիայ կամ ուրիշ տեղեր ճամբել, կորսնցնել. արդէն մաս մը տառապածներ Զէօրին աւանն անցած էին անարգ շղթաներով, և ահա Պոլսէն եկած մասնաւոր քննիչ մը սկսաւ կարգաւ բանտի դռները բանալ տալ։ Ամասիայի մէջ 397 բանտարկեալներու 369 ազատուեցան, մնացած 28 հոգին ալ թող պիտի տրուէին, բայց հայ մը մէջ ելաւ և ստիպեց որ ատոնցմէ պիտ ըլլայ այն՝ որ իմ եղբօրս սպանեց. „սպանուողը վատ մ'էր“։

Այս ազատուող բանտարկեալներուն 130-ի չափը Մարսուանցի, 150-ի մօտ Ամասիացի, 37 հոգի Հաճի գիւղէ և մնացածներն Ախլաթ Հաճի Քէօփրի, Հերէկ և այլն գիւղերէն են։

Եոզղատի բանտէն 350-ի չափ հայ դուրս եկան։ Եւդոկիայէն 300-ի չափ ալ հոգի ազատեցան։ Իսկ Սեբաստիա 300-ի մօտ բանտարկեալ կար, մինչ ցարդ ազատուած պիտ ըլլան, ինչպէս շատ տեղեր ալ կան այս կարգի յեղափոխական բանտարկեալներ։ Այս ազատուողներէ դուրս կը մնան բանտերը դեռ շատեր, որոնք իբր մարդասպան խումբեր, յեղափոխական կողոպտիչներ ամբաստանուած են, և այլն. և կան այնքան անելևոյթացած տղամարդիկ՝ որոնք գալան իշխանութեան բռնութեանց զոհուեցան։ Մանաւանդ քօլերայի ժամանակ, ինձ կըսեն մի քանի ականատես բանտարկեալներ, շատեր թունաւորելով կը մեռնէին, քօլերայէ իբր բռնուած՝ կը թաղէին՝ մինչդեռ ոչ մէկ նշան ցոյց կը տրուէր։ Ազատուողներն հիմայ նոր կեանք առած՝ կարօտեցած արևուն, ճառագայթներէ

գինովցած, կըսեն, կը պամեն իրենց քաշած այնքան զրկանքներն, որոնք մահուան ճգնաժամէն դառն էին։ Անոնցմէ մին է Միհրան Մանիսաճեան պատանին։ Գործի մտաւ. խռովութեան ատեն իր ընկերներու կարգին ինքն ալ ձերբակալուեցաւ։ Ամասիոյ բանտի մէջ զինքը շատ նեղեցին իր ամենաազատ քաջ պատասխաններուն համար։ Միհրանը իբր տղայ, ջահիլ սեպեցին և դուրս հանեցին բանտէն։ Բայց նա գործին թելը թոյլ չը թողուց. սկսաւ գրել և ման գալ, կուզէր թափել արիւնն իր սրտին ձայնին հետևելով. և ահա երբ մէկ օր գրասեղանին առջև զբաղուած էր, բազում զինուորներէ պաշարուեցաւ. նա քաջութեամբ դուրս տարաւ ինքզինքը և ազատեցաւ, քաշուեցաւ լեռները, գիւղերը. մէյմալ երբ իր մէկ ընկերի հետ ման կուգար, 50 զինուորներու և մէկ քանի ասպետներու գունդ մը դէմը ելաւ։ Ալ իր վերջին սիրած, փափագած օրն էր։ Ընկերը անձնատուր եղաւ, բայց ինքը մենակ դիւցազնաբար կուրծք տուաւ կրակելով ցածորդիներուն. եօթը հոգի սպաննեց ու անկէ վերջ վար ընկաւ իր վերքերէ։ Դեռ մահամերձ, վատերը մօտը կը վազեն և սուինով մարմինը կը ծակծկեն։ Պոլիս կը հեռագրուի և հրաման կառնեն՝ լուսանկարն առնելով զգեստներու հետ զրկեն։ Միհրան դեռ կապրէր. իր ձեռքն տուած էին հրացանը, և երբ իր պաշտելի դէմքը թղթի վրայով թուրք պաշտօնեայց պիղծ ձեռքն անցաւ՝ հազիւ կէս ժամ ալ շնչեց.... Բարբարոսները մերկացուցին և քաշելով, նետեցին բանտարկեալներու աչքին առջև, իբր... օրինակ....

Ամասիայի և Սամսոնի կողմէ տանվեց բանտարկեալներ, որ զրկուած էին Տրապիզոն՝ այս երկուշաբթի ոճրագործ ատենին ներկայացան. ատենին ներկայ էր և բռնակալ կուսակալը։ Այն յեղափոխականներ հոս՝ Սամսոն՝ ինչ որ ստորագրած էին իբր խոստովանութիւն. հոն՝ Տրապիզոն՝ բացարձակապէս ըսին, թէ մենք ասոնք ճնշման տակ ըսինք. և եթէ դուք, ով դատաւոր, մեզ պէս ծեծ ուտէիք, չարչարանք քաշէիք, աւելի շատ բաներ կըսէիք. և ասոնց մէջէն Ատոմ անունով մէկը բացարձակ խոստովանեցաւ, թէ ինքը յեղափոխական և միևնոյն ժամանակ քարոզող մ'է. — կը պարզէ ժողովրդին ցաւերու պատճառն և կը յարէ բոլորին դէմ թէ, Տաճիկ օրէնքը բոլորը անուանական է և ամեն ինչ անիրաւութեամբ կը գործադրուի և այլն. առաջարկեց որ պատժեն զինքը, բայց թոյլ տան իր ընկերները, որոնք մասնակից չեն։

Այս խրոխտ պատասխաններու վրայ, կուսակալը հրամայեց դուրս հանել այդ ....ը։

Հոս՝ Սամսոն բանտարկուած է տերվիշ մը. ասիկայ մօտ ժամանակէ մը ի վեր ժողովրդին ամեն դասակարգին մէջ մտնելով, կը քարոզէր այն, ինչ որ իրաւունք, կամ հայ.ք իրենց պահանջ կանուանեն։ Միջահասակ, սև պեխերով ու մօրուքով, գեղեցիկ դէմքով, 28-30 տարուան երիտասարդ մ'է։

Գրեթէ ամիս մ'առաջ սուլթանի գահակալութեան օրը սկսաւ ժողովրդին մէջ մտնել և քարոզ կարդալ, ցոյց տալով տիրողներու բռնութիւններն այնքան նրբամիտ, իմաստալի օրինակներով, որ վերջապէս տաճիկ կրօնաւորները կը սքանչանային իր ճարտարախօսութիւններէ և ոտանաւոր ասուածներէ։ Բայց այս իր խօսածները ոստիկաններու գործին չէր, դար. քաղաքիս երկրորդ ոստիկանը իմանալով, մօտը գնաց յարգանքով և ուզեց իմանալ որտեղից ըլլալը։ Նա ճարտարութեամբ տերկեց, թէ աշխարհի չորս կողմն է։ Իր երկդիմի և կշտամբող խօսքերը, նրբին նկատողութիւնները կոշտ պաշտօնեայէ չը հասկացուելով, զարմանքը և հետաքրքրութիւնը կասկածի վերածուելով, ուզեց իմանալ, թէ թլպատուած է թէ ոչ։ Տեսան, որ չէր... Այն ժամանակ ծեծով բանտը տանելով սկսան չարչրկել, չարաչար հարուածելով կուզէին իմանալ անունն և որտեղից ըլլալը և նա միայն խոստովանեցաւ, թէ „հայ եմ, Գէորգ անունով“։ Դեռ ատեանը բերուած չէ։

ՖՐԱՆՍԻԱ

Փարիզում միմիայն 2-3 օրուայ ընթացքում (հոկտ. 9-ից մինչև 11-ը) աշնան սկզբներին տեղի ունեցան 16 ինքնասպանութիւններ քաղցածութեան պատճառով։ Արիւնոտ դէպքեր.... Ամբողջ ֆրանսիական

մամուլը ալեկոծուեց։ Այլևս լռել անհնար էր. խօսեցին, բողոքեցին նոյն իսկ կղերական և բուրժուական մամուլը։ Բայց ո՞ւմ մեղադրեցին։ Աղքատախնամ ընկերութիւններին... Կոյր ձեռացող, կեղծաւոր մարդիկ. տեսէ՛ք, ո՞վ է կանգնած ձեր դիմաց, տեսէ՛ք, ո՞ւմ պէտք է մեղադրել։ Այդ սովի, քաղցի ու արցունքի դիմաց ապրում է Փարիզի Բոշիլդն իր փառահեղ պալատում, 3 միլիարդ (3,000 միլիոն) ֆրանկ գանձով... Սա դեռ ընտանիքի մի ճիւղն է. ամբողջ ընտանիքը տէր է 10 միլիարդի (10,000 միլիոն)։

Այդ ահագին միլիարդները կազմուել են բանուորների բերնից կտրած կոպէկներով, խեղճերի, թշուառների աղի քրտինքով ու արիւն-արցունքով։

Եւ միթէ սրանից յետոյ պիտի զարմանալ, որ այդ տեսակ մի հասարակութեան մէջ ծնւում են Էմիլ Հանրիներ, միթէ պիտի զարմանալ, որ նրանք բարձրաձայն յայտարարում են. „Չկան անմեղներ բուրժուաների մէջ. Նրանք բոլորն էլ մեղաւոր են“։ Այո՛, մեղաւոր են, որովհետև նրանց հարստանալը պատճառ է դառնում մեծամասնութեան աղքատութեան։

ԻՍՊԱՆԻԱ

„Չկան անմեղներ բուրժուաների մէջ“ ասելով է Սալվադոր Ֆրէնչը ձգել իր ռումբը Բարցէլօնի մեծ թատրոնի առաջի շարքերում և երկու տասնեակ բուրժուաներ ուղարկել Աստծու առաջ, որ հաշիւ տան, թէ ինչ հաց էին ուտում և ո՞ւմ հաշուով զուարճանում։

Սալվադորին մահի դատապարտեցին և „դարձ“-ով (երկաթէ գործիքներով) խեղդեցին։ Նրա շրթունքների վերջի կոչունն էր.

Կեցցէ՛ Անիշխանութիւն։

ԻՏԱԼԻԱ

Հոկտեմբերի 30-ին Միլանում երկու ռումբ պայթեց երկու ոստիկանատների առջև։ Այդ առթիւ կոյր ի կուրէն 10 ձերբակալութիւններ տեղի ունեցան։

ԱՒՍՏՐԻԱ

Վիեննայում եղերական դատարանի առջև ներկայացաւ Դէ.քսլէրը, որի մօտ մի ռումբ է բռնուած։ Նա խոստովանվեց անիշխանական լինելը և աւելացրեց, որ դիտաւորութիւն ունէր ձգել իր ռումբը մի շատ հարուստ սրճարան, որ Օստրաուի գործադուլի ժամանակ սպանուած բանուորների վրէժն առնէ։

Դէ.քսլէրը դատապարտուեց 4 տարով տաժանակիր աշխատանքի։

ԳԵՐՄԱՆԻԱ

Շիվէն անիշխանականը, որ ոստիկանների դէմ պաշտպանուելիս ատրճանակի 6 հարուած էր արձակել և 3 ոստիկանի վիրաւորել, Բերլինում Նոյեմբերի 7-ին 12 տարով բանտարկութեան դատապարտուեց։ Իսկ իր ընկեր Դրէգէրը՝ 5 տարով նոյն պատժին ենթարկուեց։

ԱԼԵՔՍԱՆԴՐ Գ

Մեռաւ Ալեքսանդր Գ-ը։ Արիւնախում, գիշակեր գազան բռնակալներից մէկը ևս պակասեց մարդկային արիւնոտ պատմութիւնից։ Դեռ քանի՞ քանի այդպիսի բռնակալներ ու հրէշներ է տեսնելու տանջուող մարդկութիւնը — հրէշներ ամէն կարգերի. կրօնական ու աշխարհային, հարուստ ու զօրեղ։

Ալեքսանդր Գ-ը գազան բռնակալութեան ամենախիստ տիպերից մէկն էր։ Այո՛, նրա թագաւորութեան օրով արտաքին պատերազմ չեղաւ, այո՛, նա միւս իր նման բռնակալների պէս չուզեց մի կտոր հող խլելու համար արեան գետեր հոսեցնել. բայց.... նրա թագաւորութիւնը սկզբից մինչև վերջ մի արիւնոտ պատկեր, մի գազանական արշաւանք է ներկայացնում։

Գահ բարձրանալու առաջին օրն իսկ այդ սրիկայ բռնակալը ողջունեց ռուս ժողովրդին մի յղի կին կախելով.... և դնացին, շարուեցին մէկը միւսի ետևից ռուս ազատամիտ ու յեղափոխական մաքուր, ազնիւ գլուխներն իրար ետևից դէպի կախաղան, դէպի գնտակահարութիւն... Ցուրտ, խաւար Սիբիրիա, որքա՞ն զոհեր կլանեցիր, որքա՞ն մատաղ ոյժեր, ցաւող սրտեր լափեցիր քո բռնակալ տէրերից մէկի, այս օրերս հարբամահ եղած Ալեքսանդր Գ-ի ձեռքով անդունդդ գլորած։

Այո՛, նա պատերազմ չունեցաւ, այո՛, նա

„խաղաղասէր“ էր, բայց սովը, բայց ճանճի ու մրջիւնների պէս կոտորուող միլիոնաւոր սովատանջ ժողովուրդը... բայց ամբողջ գիւղերն ու գաւառակները, որ կոտորածի էին մատնում „իշխանութիւններին դիմադրելու“ համար։ Եւ միթէ այդքան հոգեվարք դրութեան հասած, ժողովրդին այդքան քաղցած ու խեղճ վիճակի մէջ գցելուց յետոյ կարելի էր պատերազմ սկսել...

Նրա գազանութիւնը հասաւ իր գագաթնակէտին ազատասէր լեհացոց վերաբերութեամբ։ 1884-85 թւին, իր գահ բարձրանալու սկզբներին բացուեց լեհական „Պրոլետարիատ“ ընկերութեան գործը, որի առթիւ 5 հոգի կախաղան հանուեցին և շատերը բանտերում փթեցան... Ամեն տարի նոր նոր կոտորածներ, նոր բանտարկութիւններ և գազանութիւններ... 92-ի մայիսի 1-ի բանւորական տօնի առթիւ միայն Լօդզում կոտորուեցին 140 մարդ։ Ագէժում, Պարեանիցում և այլն նոյպէս կոտորածներ։ Եւ ամբողջ Լեհաստանն արիւնով, շղթաներով ու սգով ծածկուեցաւ Նրա թագաւորութեան միջոցին։ Բոնապետն իր անհամար արբանեակներովն ու ծառաներովը ձգտում էին բռնութեամբ ռուսացնել Լեհաստանը։

Յիշեցէք Նրա հրէաների դէմ հանած հալածանքը, Նրանց վրայ գործ դրուած բռնութիւնները, և այլն, և այլն։

Գիշակեր գազանութիւն էր այդ անիծեալի թագաւորութիւնն իր սեփական ժողովրդի համար, բայց ի՞նչ էր նա հայերիս համար. միթէ մենք աւելի երջանիկ ենք։ Ո՛չ, հազար անգամ ոչ։ Յիշեցէք միմիայն 1884-85 ուսումնական տարին, մեր դպրոցների զէնքի ոյժով փակումը. յիշեցէ՛ք այդ օրը մատաղ սրտերի մորմոքն ու միլիոնաւոր աչքերից հոսող արցունքները. յիշեցէք այդ դպրոցների նորից բացուիլը, անօրէն բռնակալութեան պահանջն ուսումը ռուսերէն լեզուով անելու վերաբերութեամբ։ Յիշեցէք մեր մատաղ յեղափոխական գործը. Կուկունեանի խմբի գազանական պատիժը, մեր համեմատաբար ահագին թիւ աքսորեալները. յիշեցէք Սարդարին ու Աբրհամին, յիշեցէք դեռ մինչև օրս բազմաթիւ հսկողութեան տակ գտնուած անհատներին... Յիշեցէ՛ք հարկերի ծանրութիւնը, սակաւահողութիւնը... յիշեցէք զինուորագրութիւնը, յիշեցէք այդ բոլորը և... ամեն մէկդ „ողորմի տուէք“ այդ հրէշ բռնաւորի հոգուն...

Իսկ մեր լաքէյ մամո՞ւլը, իր ազատամտութիւնով, առաջադիմութիւնով պարծեցող մամո՞ւլը... Օ՜, նա պոլիտիքա է բանեցնում, նա փառաբանում է այդ հրէշին իբրև մարդ, իբրև կայսր, խաղաղասէր և այլն, և այլն անուանելով նրան։ Ապուշներ... Երեք դրութիւն կայ լոգիկայում. թեր, դէմ և չեզոք։ Գիտենք, բռնակալութեան ձեռքումն էք, չէք կարող քննել... գիտենք. բայց գոնէ մի գովաբանէք, մի՛ աստուածացնէք այդ հրէշին... Գո՛նէ լռեցէք... Լռելո՞ւ էլ քաջութիւն չունիք...

ԺԱՄԱՆԱԿԻ ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆԸ

Անիշխանութիւնն անխուսափելի՞ է. այդ հարցը դրել է Դուբլինի գրականական ընկերութիւնը։ Աւելորդ է ասել, որ այդ ընկերութիւնը կազմուած չէ հասարակ աշխատաւորներից, այլ հարուստ, եկամուտներ ունեցող անհատներից։

Վիճաբանութիւնը երկար տևեց։

Բնականաբար գտնուեցան յետադէմներ, որ հակառակն էին պնդում, երևակայելով, որ երբ իրենք կուշտ են ուտում, ամեն բան աշխարհիս երեսին իր կարգին է։

Միւսները, ընդհակառակը, ապացուցանում էին որ քանի մարդս առաջ է գնում, այնքան կառավարչական իշխանութիւնը նուազում է. հետևապէս կը գայ մի օր, երբ այդ իշխանութիւնը զերոյի կը հասնի։

Դա կը լինի Անիշխանութիւն։

Վիճաբանութիւնից յետոյ քուէարկեցին, տեսնելու համար, թէ քանի ձայն է ընդունում և քանիսն է դէմ. մեծամասնութիւնը յայտարարեց, որ Անիշխանութիւնն անխուսափելի է։

Թերթիս դիմել հետեւեալ հասցէով.

W. Voynich. (Hamaïnk). 3, Iffley Road, 3. Hammersmith, W., London.

Փարիզ. Միջազգային տպարան.